Գ Լ Խ Ա Վ Ո Ր Տ Ն Օ Ր Ե Ն Ի Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2024 թվականի N ՑՊ-041-08/24

ք. Երևան

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ կողմից (այսուհետ նաև՝ Թողարկող) 2024 թվականի հուլիսի 22-ին ներկայացված հայտը, ինչպես նաև հուլիսի 31-ին և օգոստոսի 01-ին ներկայացված հայտի լրացումները 2,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, 9.75% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 200,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ նաև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 13-ի եզրակացությունը,

Հաշվի առնելով, որ ներկայացված պարտատոմսերը և Թողարկողը բավարարում են Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» (այսուհետև՝ Կանոններ) 12-րդ գլխով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Օպերատորի Կանոնների 6-րդ գլխի 29-րդ կետը, 16-րդ գլխի 72-րդ կետը, և, ղեկավարվելով 15-րդ գլխի 68-րդ կետի 1-ին ենթակետով, ինչպես նաև Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.58.-րդ կետի 9.58.5. ենթակետով, Գլխավոր տնօրենը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 2,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, 9.75% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 200,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ կողմից շնորհվել է AMUNIBB2RER6 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում, շնորհել UNIBBR հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
3. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի օգոստոսի 29-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**